

ԱՐԲԱՏԱԿԱՆ ԱՃԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱԾԱՆՑՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿԾԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հ. Վ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Արմատական աճականների և ածանցների ճիշտ սահմանորոշումը պատմա-համեմատական լեզվաբանության վերջնականապես շուծված ու առ այսօր վիճաբանությունների տեղիք տվող հարցերից մեկն է:

Այս հարցին վերաբերող տեսությունների հակասականությունը համեմատական լեզվաբանության մեջ պայմանավորված է մի կողմից՝ հնդեվրոպական արմատի, մյուս կողմից՝ բառի որպես հարաբերակցված ձևերի համակարգի, կառուցվածքի հարցի անբավարար մշակվածությամբ:

Հնդեվրոպական արմատի պրոբլեմի վերաբերյալ ուսումնասիրությունների մեջ կարելի է առանձնացնել երկու հիմնական խումբ. ա) ուսումնասիրություններ, որոնց արմատի հարցի քննությունը նպատակ ունի բացահայտել հնդեվրոպական թեքական ձևերը, որոշել նրանց «նախնական» կազմը. բ) ուսումնասիրություններ, որոնց նպատակն է հնդեվրոպական ձևաբանական կառուցվածքի հնագույն տարրերի քննությունը՝ արմատական ձևային տարբերակների օրինաչափության հարցը լուծելու միտումով:

Հնդեվրոպական արմատների սկզբնական բնույթի ըմբռնման մեջ նկատվում է հնդիկ քերականների ազդեցությունը, որոնք ի տարբերություն անտիկ քերականության¹, ոչ միայն տարբերում էին արմատի գաղափարը, այլև անունների ու բայերի ձևաբանական փոփոխության դեպքում հենվում այդ գաղափարի վրա, ձևաբանական փոփոխությունների քննությունը սկսում արմատից:

Հետևելով հնդիկ քերականներին, բայց չփոխել նրանց վերջնական եզրակացությունները², պատմա-համեմատական քերականության հիմնադիրները (Բոպպ, Գրիմ, Շլայխեր) սկզբից ևեթ՝ ա) մեծ նշանակություն են տալիս բառի մեջ անտրոնեյի մասի՝ արմատի առանձնացմանը, բ) արմատի քննությունը կատարում են ծագումնաբանական պրոբլեմների հետ, գ) հնդիկ քերականների հետևողությամբ զբաղվում են արմատի ձայնդարձի քննությամբ:

Վճռականորեն հրաժարվելով հնդիկ քերականների սխեմայից, փոքր-ինչ այլ ճանապարհով և այլ նպատակադրումով, առավելապես հնդեվրոպական

¹ Անտիկ քերականները բառերի հիմնական ձևեր են համարում անունների ուղղականը և բայերի ներկա ժամանակի առաին դեմքը:

² Հնդիկ քերականները արմատի և հիմքի գաղափարները հատուկ կերպով չեն սահմանազատում, արմատներ են համարում նաև բայական որոշ ածանցավոր ձևեր:

ձայնդարձն ուսումնասիրելու պրոցեսում, նույնանման հարցերի առաջադրման հն հասնում երիտքերականները (Բրուզման, Ֆորտունատով, Պորոբզինսկի)։ Արմատական ձևույթների քննությունը դիտվում է իբրև օժանդակ միջոց՝ բացահայտելու հնդեվրոպական թեքական ձևերի ծագումը։ Արմատական ձևույթի տարբերական հարցը որպես ինքնուրույն, առանձին պրոբլեմ չի ներկայացրել³։

Ի մի բերելով այս շրջանի ուսումնասիրությունների արդյունքները, որոնք, անշուշտ, ամբողջությամբ վերցրած անվիճելիորեն որոշակի արժեք են ներկայացնում, միաժամանակ նկատենք, որ այսպիսի հետաքրքրությունը «արմատի» նկատմամբ, սկզբնական շրջանում շեղում էր ուշադրությունը բառի ձևաբանական կառուցվածքը իր ամբողջության մեջ վերլուծելուց³։

XX դ. սկզբներին ղգալի աշխատանք է տարվում հնդեվրոպական ձևաբանական կառուցվածքի հնագույն տարրերի ուսումնասիրման ուղղությամբ, որտեղ մեծ բաժին է ընկնում արմատական ձևույթի տարբերացման օրինաչափության քննությանը։ Մի կողմից՝ ձգտելով խորացնել հնդեվրոպական բառի բաղադրիչ տարրերի ձևաբանական կառուցվածքի վերլուծությունը և ապացուցել նրանց պատմության մեջ ավելի խոր ներթափանցելու անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ ցանկանալով բացահայտել հնդեվրոպական լեզուների առանձին խմբերի պատմական փոխհարաբերությունները, համեմատաբանները քննության են առնում հնդեվրոպական լեզվի համակարգը, կամ նրա պատմական ընթացքը ամբողջությամբ, ըստ այդմ լուսաբանում արմատի հետ կապված հարցերը ու լայն ընդգրկմամբ ներկայացնում նրա հիմնական գծերը։

XX դ. զարգացան և կատարելագործվեցին հնդեվրոպական ձևաբանական կառուցվածքի հնագույն տարրերի ուսումնասիրության մեթոդները։ Այդ կատարվում էր նոր հարցադրումների և ընդգրկումների, եղածների խորացման, մշակման, սխտեմավորման և տարբեր տեսանկյուններից կատարվող բնութագրումների կարգով։ Ինքնին հասկանալի է, որ հնդեվրոպաբանության ընդհանուր հարցերի բնագավառում ձեռք բերած հաջողությունները մեծապես նպաստեցին նաև հնդեվրոպական լեզուների բառակազմական պրոցեսների պատմա-համեմատական ուսումնասիրությանը, որը դարձավ համեմատական լեզվաբանության կարևոր բնագավառներից մեկը։

Այսպիսով, համեմատական լեզվաբանությունը նորից անդրադարձավ հնդեվրոպական ձևաբանական կառուցվածքի ծագման հարցի առաջադրմանը, որ ժամանակին գրավել էր Բոպպի և նրա ժամանակակիցների ուշադրությունը։

Հնդեվրոպական բառի ձևաբանական կառուցվածքի մանրակրկիտ քննությունը կատարված է Ա. Մեյեի «Հնդեվրոպական լեզուների համեմատական ուսումնասիրության ներածություն» աշխատության մեջ, որի «Արմատների ձևի մասին» գլուխը նվիրված է հատկապես այդ պրոբլեմի մշակմանը։ Այս ուսումնասիրության մեջ Մեյեն հակադրվում է այն լեզվաբաններին, որոնք արմատի կառուցվածքի հարցը կամ ընդհանրապես չէին դնում, կամ էլ ուրվագծում էին ամենաընդհանուր կողմերով (երիտքերականներ, Ֆորտունատ-

³ «Вопросы методики сравнительно-исторического изучения индоевропейских языков», М., 1956, стр. 186.

տովի դպրոց, Սոսյուր): Մանրագնին հետազոտությունները հեղինակին բերում են այն համոզման, որ արմատը անտրոնելի և քարացած տարր չէ. «հակադրվելով ածանցին և վերջավորությանը՝ արմատը մի ամբողջություն է կազմում, բայց ինքնըստինքյան կարող է հաճախ տրոհվել»⁴:

Արմատների տրոհելի լինելու այս նոր եզրահանգումը հատուկ է դառնում հնդեվրոպական լեզուների ցեղակցության հարցերին նվիրված նորագույն ուսումնասիրությունների թեմատիկային: Թեև արմատի կառուցվածքին հատուկ ուսումնասիրություն չի նվիրվել, բայց առանձին դեպքերում այն անմիջական հետաքրքրության առարկա է դարձել:

Հնդեվրոպական արմատի հնագույն կերպարանքին անդրադառնում են առաջին հերթին ընդհանուր տեսական բնույթի ուսումնասիրություններում, որտեղ արմատի պրոբլեմը լուծելու միտումով քննության են առնվում հնդեվրոպական ձևաբանական կառուցվածքի այն տարրերը, որոնք վերաբերում են թեքման առաջացմանը նախորդող վիճակին: Դրանցից ամենակարևորներն են Պ. Պերսոնի⁵, Ա. Մեյեի⁶, Հ. Հիրտի⁷ աշխատությունները: Այնուհետև, արմատների կառուցվածքը քննվում է այնքան, որքան այդ անհրաժեշտ է որևէ քերականական կատեգորիայի ծագումը և նրա պատմական զարգացման ընթացքը հնդեվրոպական կոնկրետ լեզուներում պարզելու համար⁸:

Նշված աշխատություններում հեղինակները անդրադառնում են բազմաթիվ տեսական հարցերի, որոնցից առավել կարևոր են՝ հնդեվրոպական ձևաբանական կառուցվածքի ծագման, հնդեվրոպական լեզուների առանձին խմբերի պատմական փոխհարաբերության, բառի նախահնդեվրոպական ձևի, հնդեվրոպական լեզվի նախաթեքական վիճակի, բառի բաղադրիչ տարրերի փոխհարաբերության և զարգացման ընդհանուր տեղեկությունների, կառուցվածքային փոխհարաբերությունների և այլ խնդիրներ:

Սրանցից անբաժանելի է նաև արմատական ածականների և ածանցների սահմանորոշման և տարբերակման հարցը:

Այն ընդհանուր հետևությունը, որ հնդեվրոպական արմատը անտրոհելի և քարացած տարր չէ, անշուշտ շահագանց կարևոր դրույթ է հնդեվրոպական լեզվաբանության զարգացման հետազոտության, պատմական մոտեցման խորացման, արմատացած ավանդական հայացքների վերանայման, պատմահամեմատական ուսումնասիրությունների մեթոդիկայի վերակառուցման համար: Այս դրույթը փաստորեն հնդեվրոպական ածանցների և ածականների

⁴ А. Мейе, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М., 1938, стр. 193.

⁵ P. Persson, Beiträge zur indogermanischen Wortforschung, Bde I—II, Uppsala und Leipzig, 1910—1912.

⁶ А. Meillet, Introduction à l'étude comparative des langues indoeuropéennes. 7-me éd. refondue, Paris, 1934.

⁷ H. Hirt, Indogermanische Grammatik, Bd. III, Heidelberg, 1927.

⁸ E. Benveniste, Origines de la formation des noms en Indo-Européen, Paris, 1929, F. Specht, *բազմաթիվ հոգվածներն ու գրախոսականները և „Der Ursprung der indogermanischen Deklination“*, Göttingen, 1947, Գ. Բ. Ջահոնկյան, *Հին հայերենի հոլովման սխեմերը և նրա ծագումը*, Երևան, 1959, Э. А. Макаев, Структура слова в индоевропейских и германских языках, М., 1970; Л. Г. Герценберг, Морфологическая структура слова в древних индоиранских языках, Л., 1972.

տարբերական ելք բաց արեց, սակայն առաջադրված հարցի լուծման համար դեռևս բավարար չէր:

Այսպես, Մեյքեն գտնում է, որ հուն. $\text{F}\epsilon\lambda\pi\omega$ «հուսադրում եմ», $\text{F}\epsilon\text{-F}\omega\lambda\pi\alpha$ «հուսազրեցի», $\text{F}\epsilon\lambda\pi\text{-}\iota\varsigma$ «հույս», $\text{F}\epsilon\lambda\delta\text{-}\omicron\upsilon\alpha\iota$ «ցանկանում եմ», հոմեր. $\epsilon\text{F}\epsilon\lambda\omicron\text{-}\omega\rho$ «ցանկություն» միևնույն նախնական արմատի հանգեցվող զույգերը կարելի է լատ. *velle* «ցանկանալ», գոթ. *wiljan*, լիթ. *vil-iu* «հուսամ», *vil-tis* «հույս» և հին սլ. *всл-ѣти* ձևերի համադրությամբ բխեցնել **wel* արմատից և, հետևաբար, ճիշտ կերպով առանձնացնում **wel* «հուսալ» կամ ավելի ընդհանուր իմաստով «ցանկալ» ավելի պարզական արմատը և նրա **p*, **d* աճականները⁹ և միաժամանակ նշում պատմա-համեմատական ուսումնասիրությունների մեթոդիկայի համար կարևոր մի դրույթ. «ըստ էության, արմատական աճականների մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ «ընդլայնված» արմատը միաժամանակ տալիս է և՛ բայական, և՛ անվանական հիմքեր. հակառակ դեպքում խոսք կարող է լինել միայն բայական կամ անվանական ածանցների մասին»¹⁰, բայց, սրա կողքին, աճականների ինչ ֆունկցիայով գործառնելու հարցում նշում է, որ մեծ մասամբ դրանք հնարավոր չէ տարբերակել ածանցներից¹¹:

Կուրցիուսը համեմատական լեզվաբանության մեջ առաջին անգամ մտցնելով արմատի աճական (*Wurzel determinativ*) տերմինը¹², առաջարկում է հնդեվրոպական հնագույն ձևաբանական կառուցվածքի զարգացման վեց փուլերի ժամանակագրական հաջորդականության սխեման՝ արմատների շրջան, աճականների շրջան, նախնական բայական շրջան, հիմքերի կազմավորման շրջան, բարդ բայական ձևերի շրջան, հոլովների կազմավորման շրջան, մակբայների կազմավորման շրջան:

Աճականների շրջանը համարվում է հնդեվրոպական լեզուների քերականական կառուցվածքի հիշյալ փուլերից համեմատաբար ավելի նախնականը:

Կուրցիուսը աճական է կոչում արմատին հարող այն մասնիկ-բաղաձայնները, որոնք զուրկ են որոշակի ածանցական իմաստից:

Աճականների բնորոշումը՝ որպես հետագայում իրենց իմաստային ֆունկցիան կորցրած հնագույն բառակազմական վերջածանցների, հատուկ է քննարկվող դարաշրջանի համեմատաբանների մեծամասնությանը:

1891 թ. լույս տեսավ շվեդ լեզվաբան Պ. Պերսոնի «Հետազոտություններ արմատի տարբերացման և ընդլայնման մասին» աշխատությունը: Խոսելով հնդեվրոպական արմատի կառուցվածքի նախնական տեսքի մասին, հեղինակը տալիս է միևնույն արմատից ծագած և գրեթե նրա նշանակությունից չսահմանազատվող աճականների առկայությամբ բնորոշվող «երկրորդական» արմատների օրինակներ՝ **kert* «կտրել» **ker*-ի կողքին, **merd* «կորցնել» **mer*-ի կողքին, **kleus* «լսել» **kleu*-ի կողքին և այլն: Նա բերում է հնդեվրոպական լեզվաբանության մեջ մտնող առանձին լեզուներից այս

⁹ A. Meke. նշվ. աշխ., էջ 193:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում:

¹² G. Curtius, Zur Chronologie der indogermanischen Sprachforschung, „Abhandlungen der Königlischen Sächsischen Gesellschaft der Wissenschaften“, Philol.-histor. Klasse, Bd. 5, Leipzig, 1867. Հետագայում նույն նշանակությամբ գործածության մեջ մտան նաև արմատի ընդարձակիչներ, որոշիչներ, դետերմինատներ տերմինները:

կարգի կարևոր փաստեր՝ մեկ սկզբնական արմատից տարբեր ածականներով հերթագայվող հիմքեր. ա) բաղաձայնական տարբեր ածականներով արմատների հերթագայություն՝ սանսկրիտ $\zeta u-C/\zeta u-dh-/\zeta u-bh$ «փայլել», հուն. $\Gamma\epsilon\lambda\delta-/Fe\lambda\pi$ «ցանկանալ», «հուսալ» և այլն. բ) բաղաձայն ածականի հերթագայություն ձայնավորի հետ *dr-em/*dr-u- «վազել», *bhr-em/*bhr-u «եռալ», «եփել» և այլն. գ) նույն բաղաձայնի դեպքում ձայնավոր տարբերի հերթագայություն՝ *ter-, *trē-/*tr-i-/*tr-u «տրորել», «շոշափել», *sker, *skrē-/*skr-i-/*skr-u- «կտրել», «նղթել», «ափանել» և այլն:

Այս երևույթը Պերսոնը կոչում է արմատների տարբերացում (Wurzel-variation), և նրա հաշվառումը կարող է որոշակի հետաքրքրություն ներկայացնել համեմատական լեզվաբանության ընդհանուր մեթոդիկայի պլանում, քանի որ 1) մի նախաձեռն չհանգող արմատական ձևերը ծագումնաբանորեն ցեղակից են, 2) այդպիսի ձևերի տարբերությունը պայմանավորված է ոչ թե հնչյունական օրենքների գործողությամբ, այլ հիմքերի կազմության տարբերություններով:

Սակայն Պ. Պերսոնը դժվարանում է պարզ և որոշակի սահմանագիծ դնել արմատական ածականների և ածանցների միջև: Նա գտնում է, որ ածականների և ածանցների միջև եղած տարբերությունը սոսկ հարաբերական է¹³, Սրանով Պերսոնը ընդունում է, որ ածականները խոսողների գիտակցության մեջ իրենց նշանակությունը կորցրած ածանցներն են: Նա այս եզրակացության է հանգում իր ավելի ուշ՝ 1912 թ. լույս ընծայած «Հնդեվրոպական բանականացման ուսումնասիրություններ» աշխատության մեջ:

Արմատական ածականների և ածանցների հարցը Մեյսի մոտ հանգում է բառակազմական ընդհանուր արժեքավորման, գործառության միևնույն սահմանների և գրեթե նույն բնույթը ունեցող տարբեր գիտակցմանը: Ինչպես վերն ասվեց, նա ածականների և ածանցների խիստ սահմանազատումը համարում է անհնարին¹⁴:

Հիշյալ հետազոտողներին մոտ է և Հ. Հիրտը, որը գտնում է, որ միևնույն հնչյունական կապակցությունները հանդես են գալիս մերթ որպես ածանցներ, մերթ որպես ածականներ¹⁵:

Բայց եթե Մեյսի և Պերսոնի մոտ հարցի այսպիսի լուծման պատճառը նրանց անբավարար ուշադրությունն էր բառի՝ որպես հարաբերակցված ձևվերի բարդությանը, ապա Հիրտի մոտ այն պայմանավորված էր լեզուների պատմության փաստերի նկատմամբ մակերեսային մոտեցման վրա հիմնված, գիտականորեն չարդարացված վարկածներով, որոնք շարադրվում են նրա կողմից որպես վերջնական նվաճումներ հնդեվրոպաբանության բոլոր կարևորագույն պրոբլեմների լուծման մեջ¹⁶: Այդ վարկածները հիմնականում հանգում են հետևյալին. ա) անունը որպես քերականական կարգ բայից հին է, բ) սկզբնական բայերը անվանական ծագում ունեն:

¹³ P. Persson, Beiträge zur indogermanischen Wortforschung, էջ 589:

¹⁴ A. Meiß, նշվ. աշխ., էջ 193:

¹⁵ Այս անհատականությունը բնորոշ է Հիրտի բոլոր աշխատություններին, հատկապես՝ «Indogermanische Grammatik», Bd. III. Heidelberg, 1927, էջ 85—165:

¹⁶ A. Десницкая, Вопросы изучения родства индоевропейских языков, М.—Л., 1955, стр. 222

Հարցը քննելով հնչյունական կառուցվածքի առումով, արմատական աճականները և ածանցները նույն բառակազմական գործառութիւնը ունեցող տարրեր է համարում Բենվենիստը իր «Հնդեվրոպական բառակազմության ծագումը» գրքում: Բենվենիստի՝ ձևաբանական հարցերի հնչյունաբանական մեկնաբանությունը գերազանցապես դրսևորվում է արմատական աճականների և ածանցների նրա սահմանորոշման մեջ, որի հիմքը իր իսկ՝ Բենվենիստի հնդեվրոպական արմատի տեսությունն է: Հնդեվրոպական արմատը եռահնչյութ է՝ կազմված երկու տարրեր բաղաձայնների միջև գտնվող հիմնային *e-ից*: Ըստ Բենվենիստի *e-ն*, *a-ն*, *o-ն* (*e-ի* հետ չհերթագավող) և *ē-ն*, *a-ն*, *ō-ն* ներկայացնում են *e*, որին նախորդում կամ հաջորդում են *ə-ի* երեք ձևերը՝ $a_1 + e = e$, $a_2 + e = a$, $a_3 + e = o$ և $e + a_1 = ē$, $e + a_2 = ā$, $e + a_3 = ō$ ¹⁷: Այսպիսով, **ed-* ծագած է համարվում **ə*, *ed-ից*, հմմտ. **sed-*, **ag-*ը *əyeg-ից*, հմմտ. **teg-*; **ok¹¹-ը* *əyek¹¹-ից* հմմտ. **ōek-*; և այլն¹⁸:

Բաղաձայն $e +$ բաղաձայն մշտական սխեմայում բաղաձայնները կարող են հանդես գալ ցանկացած կարգով: Ածանցների և արմատների ձևաբանական կառուցվածքի փոխհարաբերությունը Բենվենիստը այսպես է ներկայացնում: Արմատից ածանցի օգնությամբ կազմվում են երկու կարգի հիմքեր, որոնց մեջ արմատը և ածանցը խիստ համապատասխանության մեջ են գտնվում. եթե արմատը ձայնդարձի լրիվ աստիճան ունի (*e/o*) և իր վրա շեշտ է կրում, ապա ածանցի մեջ հանդես է գալիս զրո աստիճանը, և ընդհակառակը:

Ըստ Բենվենիստի՝ ածանցները որպես բառի կազմի մեջ մտնող ձևույթներ ծագել են միայն հնդեվրոպական ձայնդարձի առաջացումից հետո, իսկ աճականները՝ ձայնդարձի ծագումից և նույնիսկ ձայնավորների զարգացած համակարգի ստեղծումից էլ առաջ: Նախապես ինքնուրույն բառերի՝ ածանցի վերափոխելու, արմատական ձևույթի հետ նրանց սերտաճելու հետևանքով ձայնդարձի երևույթը տարածվեց նաև ածանցային ձևույթի վրա: Այսպիսով, ածանցը որպես բառի կազմի մեջ մտնող ձևույթ առաջանում է միայն ձայնդարձի առաջացումից հետո: Հետևաբար, ձայնդարձի օրենքներին ենթարկվելով, ածանցը պետք է անպայման ունենա ձայնավորում (թեկուզև զրո աստիճանի), մինչդեռ աճականը, լինելով բառակազմական և ձևակազմական միջոց ձայնդարձի ծագումից և նույնիսկ ձայնավորների զարգացած համակարգի ստեղծումից էլ առաջ, միշտ եղել և մնում է զուտ բաղաձայնական տարր: «Ածանցը աճականից, — գրում է Բենվենիստը, — մենք տարբերում ենք զուտ ձևականորեն՝ ածանցը բնորոշվում է իր հերթագայվող ձևերով *-et/-t*, *en/-n*, *ek/-k* և այլն, իսկ աճականը շունենալով հերթագայություն՝ բաղկացած է մեկ բաղաձայնից (*-t-*, *-n-*, *-k-* և այլն)¹⁹:

Հենվելով հնդեվրոպական լեզուների բառերի բառա-իմաստային քննության, ինչպես նաև քերականական կառուցվածքների առավել արխաիկ երևույթների վերլուծության վրա, նույնանման հարցեր է առաջադրում Շպեխտը իր «Հնդեվրոպական հոլովման ծագումը» մենագրության մեջ: Աշխատու-

¹⁷ Э. Бенвенист, Индоевропейское именное словообразование, М., 1955, стр. 179.

¹⁸ Նույն տեղում, էջ 180:

¹⁹ Նույն տեղում, էջ 179:

թուներ նվիրված է հատկապես հնդեվրոպական անվանական բառափոխության (Flexion) պրոբլեմին, որը հեղինակի կողմից մեկնաբանվում է բառակազմության հարցերի հետ սերտ կապի մեջ: Շպեխտի կարծիքով անվանական բառափոխության համակարգում օ-ով և ձ-ով հիմքերի կազմավորմանը նախորդած՝ տարահիմք հոլովման մնացուկների մեջ արմատական ձևույթի վերջին՝ փոփոխվող հնչյունները ծառայում էին ոչ միայն հոլովական ձևերի կազմությանը, այլև գործառուում էին բառակազմական նպատակներով:

Համադրելով միևնույն նախնական արմատին հանգեցվող զույգերը, ինչպես նաև որոշակի բառային կարգերի բառերը տրոհելով արմատների և ածականների, Շպեխտը հնդեվրոպական բոլոր լեզուների մակարդակով²⁰ առանձնացնում է հետևյալ ածականները -k-/-g-, -t-/-d-, -s-, -e-/-o-, -i-/-u-, -l-/-r-, -n-, -men: Այս ածականներից ամենակարևորները նա համարում է -k-/-g-, -t-/-d-, -s-, որոնք միանում էին չեզոք սեռի տարահիմք որոշ անուններին (հին հնդ. asr-k, yakr-t, kravi-s և այլն): Այսպիսով, միևնույն հնչյունը նույն բառի սահմաններում մի կողմից՝ հանդես է գալիս բառակազմական գործառույթամբ, մյուս կողմից՝ քերականական մասնիկի արժեք ունի անվանական համակարգում:

Շպեխտի նշած մյուս՝ i, u, l/r, n տարրերը, որոնք անձնական դերանվան արմատներ դարձան, հետագայում վերածվեցին ածանցի և ոչ միայն ծառայեցին տարահիմք տիպի տարածման ժամանակաշրջանում գոյություն ունեցող երկու՝ ուղիղ և թեք հոլովների տարբերակմանը, այլև միանալով անվանական արմատներին, արտահայտեցին տարածական հարաբերությունները -k-, -g-, -t-, -d-, -s- տարրերը հիմք լեզվի հետագա զարգացման պրոցեսում նույնպես ստացան ցուցական նշանակություն և իրենց հիմքակազմական ֆունկցիայով համընկան ավելի ուշ շրջանի ածանցային ածականներ e/o, -i-, -u-, -men-, -l-, -r- -ի հետ:

Գնալով բառափոխության և բառակազմության տարրեր պրոցեսների փոխկապակցության վերլուծության ճանապարհով և հենվելով ոչ լեզվաբանական չափանիշների վրա²¹, Շպեխտը չհասավ արմատական ածականների և ածանցների տարբերակման ճշգրիտ չափանիշների: Այնուամենայնիվ, նրան հաջողվել է որոշ հետաքրքրական դիտողություններ անել հնդեվրոպական բառի ձևաբանական կառուցվածքի վերաբերյալ: Ուշագրավ է հիմքակազմական այն պրոցեսների բնույթի հարցադրումը, որոնց ժամանակ իմաստակիր հնչյունական նախկին նյութը հիմնականում մնալով որպես գործուն միջոց, ստանում է նոր գործառույթուն՝ հարմարվելով նոր համակարգին²²:

²⁰ F. Specht, Der Ursprung der indogermanischen Deklination, էջ 289—386.

²¹ Բառային կարգերի նրա առանձնացումը չափազանց վիճելի է: Հմմտ. Э. Макаев, Структура слова ..., էջ 183, որտեղ նշվում են Շպեխտի ուսումնասիրության մի շարք թերություններ՝ ածականների միադիտ վիճակագրական քննություն բոլոր հնդեվրոպական լեզուներում, համահնգեվրոպական և հնդեվրոպական առանձին լեզուների մակարդակների խառնում, որի հետևանքով նույն ածականը նույն գործառույթամբ ընդունվում է թե՛ նախահնդեվրոպական վիճակի համար, և թե՛ հին ու նոր ժամանակակից հնդեվրոպական լեզուների և նրանց բարբառների համար:

²² «Вопросы методики сравнительно-исторического изучения индоевропейских языков», М., 1956, стр. 203.

Բացի այդ, Շպեխտի նկատած հնդեվրոպական լեզուներին հատուկ՝ բառակազմության և ձևակազմության խաչաձևումը կարելի է բացատրել որպես ածանցաթեքություն համանունություն:

Այս հարցերի ուսումնասիրությանը հատուկ տեղ է տվել և արժեքավոր հետախույզներ է արել է. Մակաևը՝ նա գտնում է, որ աճականները և ածանցները բառակազմական գործառության տարրեր սահմաններ և միանգամայն տարբեր բնույթ ունեցող տարրեր են: Հակադրվելով այն լեզվաբաններին, որոնք աճականները դիտում են որպես հետագայում իրենց իմաստային գործառությունը կորցրած հնագույն բառակազմական վերջածանցներ, վիճարկելով Բենվենիստի²³ միայն հնչյունական մակարդակով ձևաբանական կառուցվածքի տարրերը բնորոշելու մեթոդը՝ նա ելնում է այն դրույթից, որ աճականները ածանցավոր հիմքեր ստեղծելու իրենց դերով խիստ հակադրվում են վերջածանցներին: Մակաևը տարբերակում է ածանցը և աճականը համաժամանակյա և տարաժամանակյա հարթություններում:

Տարաժամանակորեն ածանցը և աճականը վերաբերում են հնդեվրոպական լեզվի տարբեր ժամանակագրական կտրվածքներին՝ -k- աճականը աճելի վաղ կտրվածքի, -k- ածանցը՝ աճելի ուշ:

Համաժամանակորեն ածանցը և աճականը տարբերվում են գործառությամբ և բաշխմամբ. ածանցը միշտ իմաստակիր է (բառի ամենափոքր իմաստակիր մասը), միշտ՝ բառի մաս, աճականը՝ ձևական տարր՝ արմատի մաս:

Աճականը, եթե այն զատելի է, միշտ զբաղեցնում է արմատի և ածանցի միջին դիրքը, երբեք չի հաշորդում ածանցին:

Գործառությամբ ածանցը բառի ձևափոխիչ է, աճականը՝ արմատի: Կառուցվածքային տեսակետից աճականը մենատարր է (e/o, i, u, k, g, t, d, n, r, l, s), ածանցը կարող է լինել մենատարր, ինչպես նաև ունենալ ձայնավոր+բաղաձայն, բաղաձայն+ձայնավոր (-k-, -l-, -n-, -lo-, -no-, -tro-, -ko-, -er-), մաքուր ձայնավոր (-š-, -o, -l, ū) կառուցվածքային կաղապար²⁴:

Նշելով շարադրվածից, կարելի է պատկերացնել հնդեվրոպական բառակազմական հարացույցի շրջանակներում աճականների և ածանցների փոխհարաբերության լուսաբանման հարցի ամբողջ դժվարությունը: Առավել էականը այն է, որ աճականների և ածանցների սահմանորոշումը ուսումնասիրողին ներկայանում է պրոբլեմատիկ բազմաթիվ հարցերով:

Այս հարցերի լուծումը կարևոր է ոչ միայն ինքնին, այլև ընդհանրապես հնդեվրոպական լեզուների ձևաբանական կառուցվածքի հնագույն տարրերի ուսումնասիրության տեսակետից:

Վերը նշված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հնդեվրոպական լեզուներում աճականների որոշակի կանխադրման համար հիմքեր կան. մեր կարծիքով, արմատական աճականները և ածանցները կարելի է սահմանորոշել հետևյալ սկզբունքներով՝ ա) պարզել հնդեվրոպական լեզվական ընդհանրության այն արեալը, որից սկզբնավորվել է տվյալ լեզուն. բ) հնդեվրոպական ձևաբանության փաստերի նկատմամբ հանդես բերել հետևողական պատմական մոտեցում՝ ածանցյալ հիմքերի փոխհարաբերության պատմական

²³ Բենվենիստի վերահիշյալ կոնցեպցիայի մանրամասն քննադատությունը տե՛ս Յ. Մա-
 քաև, նշվ. աշխ., էջ 130—181:

²⁴ Յ. Մաքաև, նշվ. աշխ., էջ 162—163:

զնահատմամբ, քանի որ այուրաքանչյուր լեզվական համակարգ ունի իր բաղկացուցիչ տարրերի կապերը, որոնք կարող են բնավ էլ չհամապատասխանել այդ նույն տարրերի միջև եղած կապերին՝ տվյալ համակարգի զարգացման անցած աստիճանների վրա²⁵։ Դ) քննել հնդեվրոպական բառի կառուցվածքի փոփոխությունների այն օրինաչափությունները, որոնք մի կողմից ընդհանրական բնույթ ունեն, առաջացել են հնդեվրոպական բոլոր լեզուներում գործող ընդհանուր միտումների հետևանքով (տիպաբանորեն զուգահեռ հնչյունական օրինաչափություններ), մյուս կողմից՝ լեզուների անկախ զարգացման ընթացքում՝ նրանց ներքին օրինաչափությունների ծավալման հետևանքով։

Այս սկզբունքներից ելնելով, կարելի է թե՛ հայերենում, թե՛ հնդեվրոպական մյուս լեզուներում սահմանորոշել հնդեվրոպական վիճակից ժառանգված աճականները և ածանցները, ըստ իրենց դործառության յուրահատուկ առաջնության, նոր օրինաչափությունների երևան գալու, հիմնական տարրերի հարաբերակցության պատմական ծավալման պատկերի։

Այսպիսի քննությունը հնարավորություն կտա՝ 1) վեր հանել այն բնորոշ ընդհանուրը, որով աճականներն ու ածանցները միավորվում են իրրև ածանցյալ հիմքերի հիմքակազմիչ տարրեր, միաժամանակ նշելով նրանց տարբեր բնույթը, 2) որոշել այն տարբերությունները, որոնք ըստ երևույթին, արտացոլում են ավելի ուշ բարբառային առանձնահատկություններ՝ հնդեվրոպական լեզվական ընդհանրության շրջանակներում և առանձին լեզուների անջատումից հետո։

О ВОПРОСЕ РАЗГРАНИЧЕНИЯ КОРНЕВЫХ ДЕТЕРМИНАТИВОВ И СУФФИКСОВ

Г. В. СУКИАСЯН

Р е з ю м е

В исследовании закономерностей дифференциации индоевропейской корневой морфемы компаративисты достигли значительных успехов. Однако большинство компаративистов в пределах индоевропейской словообразовательной парадигмы не различает четко и однозначно корневых детерминативов и суффиксов, что обусловлено, во-первых, недостаточным вниманием ученых к слову как составной структуре соотнесенных (морфологических) форм, во-вторых, их нечеткими теоретическими позициями. Детерминативы и суффиксы являются элементами, имеющими совершенно различный характер и различные границы словообразовательного функционирования. Они разграничиваются в соответствии со своим функционированием, своеобразием изменений, возникновением новых закономерностей и картиной развертывания соотношения основных форм.

²⁵ А. А. Белецкий, Принципы этимологических исследований (на материале греческого языка), Киев, 1950, стр. 225.